

## Վարկային գործունեության մասնակցության համար հավատարմագրված ֆինանսական հաստատությունների ցանկը

ՀԱՀ-Հայաստանի կողմից իրականացվող «Զրից դեպի շուկա» բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է գյուղացիական տնտեսություններին ցուցաբերել տեխնիկական օժանդակություն գիտելիքների և նոր տեխնոլոգիաների փոխանցման միջոցով, ինչպես նաև տրամադրել վարկային միջոցներ բաղադրիչի շահառուներին՝ գյուղատնտեսական արտադրությունը ընդլայնելու և արդյունավետ տեխնոլոգիաները կիրառելու նպատակով: Վարկային ծրագիրն իրականացվելու է բանկերի եւ վարկային կազմակերպությունների միջոցով: Բանկերի և վարկային կազմակերպությունների ընտրությունն իրականացվելու է երկու փուլով: Առաջին փուլում, որը կհետևի հավատարմագրման հայտեր ներկայացնելու գործընթացին, ՀԱՀ-Հայաստանը կվճռի հատկացման գործընթացին մասնակցելու իրավասությունը: Երկրորդ փուլում վարկային ծրագրի գումարները պարբերական կարգով կտեղաբաշխվեն վարկ տրամադրողներին՝ հիմնվելով մրցութային գործընթացի վրա:

Հավատարմագրման համար սահմանվել են հետևյալ հիմնական չափանիշները.

1. Լիցենզավորված են և համապատասխանում են ՀՀ Կենտրոնական Բանկի և Հայաստանի Հանրապետության օրենքներին և կանոնակարգերին,
2. Համաձայն են ՀԱՀ-Հայաստանի վարկային հնարավորության վարկային համաձայնագրի պայմաններին,
3. Ձեռնամուխ են սպասարկելու Հայաստանի գյուղատնտեսության ոլորտին և Զրից դեպի Շուկա ծրագրի նպատակային շահառուներին:

ՀԱՀ-Հայաստանի կողմից ձևավորված հանձնաժողովի կողմից գնահատվել է վարկային ծրագրի հավատարմագրում ստանալու համար դիմած 11 ֆինանսական հաստատությունների ներկայացրած հայտերը, որոնք բոլորն էլ համապատասխանել են վերոնշյալ չափանիշներին: Այնուհետև ստացվել է Կենտրոնական Բանկի դրական կարծիքն այն մասին, որ այդ ֆինանսական հաստատությունների գործունեությունը համապատասխանում է Կենտրոնական Բանկի կողմից սահմանված պահանջներին: Ստորև ներկայացվում է հավատարմագրված բանկերի և վարկային կազմակերպությունների ցանկը, որն հաստատվել է Կառավարման խորհրդի 2008թ. փետրվարի 7-ի նիստով.

1. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
2. «ԲՏԱ Ինվեստբանկ» ՓԲԸ
3. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ

4. «Կասկադ Բանկ» ՓԲԸ
5. «Անելիք Բանկ» ՓԲԸ
6. «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
7. «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ
8. «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ունիվերսալ վարկային կազմակերպություն ԱԿ
9. «Նոր Հորիզոն» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ
10. «Էկոնոմենիկ Եկեղեցական Փոխատվական Ֆոնդ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ
11. «Կասկադ-Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ: